Վարդավանք

Բնակչություն՝ 108

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 14 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1120 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,

Նախկինում ընդգրկված էր Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուր գավառում: Այստեղ կան եկեղեցու ավերակներ, գերեզմանոցներ, Պուտխաչ կոչվող հնավայրը: Վարդավանքի հարևանությամբ գտնվում է Բարգուշատ գյուղը, որը հաճախ նույնացվում է Տաթևի վանքի նոր հարկացուցակում հիշատակված Կոմեն (Ն.Կոմեն) գյուղի հետ: Վարդավանքը մինչև 1991թ. գտնվում էր Սյունիքի գյուղխորհրդի կազմում, 1991-ին տարանջատվել է՝ կազմավորվելով որպես ինքնուրույն վարչական միավոր: 1996 թվականից ստացել է համայնքի կարգավիճակ:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 777 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 321 հա, որից՝
- վարելահող՝ 89 հա, բազմամյա տնկարկ՝ 4 հա, խոտհարք՝ 9 հա, արոտ՝ 84 հա, այլ հողատեսք՝135 հա
- բնակավայրերի հողեր՝ 30 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 1 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 2 հա,
- անտառային հողեր՝ 422 հա, որից անտառածածկ՝ 265 հա
- ջրային հողեր՝ 2 հա